

Գագարինականն ունեցավ մանկական զբոսայգի

04.06.2015

Սեւան քաղաքի Գագարինական թաղամասում՝ Գագարինի անունը կրող հուշարձանի հարակից տարածքում երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ նշվեց երկու տոն՝ բնակավայրի հիմնադրման 60-ամյակը եւ մանկական զբոսայգու պաշտոնական բացումը: Միջոցառմանը մասնակցում էր նաև Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Երբեմնի անբարեկարգ տարածքը վերածվել էր հաճելի զբոսայգու՝ մանկական խաղամիջոցներով, շատրվանով, նստարաններով, ծաղկապատ ու ծառապատ: Զբոսայգում իրենց նկարչական եւ ձեռքի աշխատանքներն էին ցուցադրում գագարինցի շնորհալի երիտասարդներն ու դպրոցականները: Օրվա համար պատրաստված միջոցառման մեկնարկը տրվեց մշակույթի պալատի հարակից տարածքում: Զբոսայգու պաշտոնական բացումն իրականություն դարձավ Սանկտ-Պետերբուրգում ապրող գագարինցի բարերար Դավիթ Գալստյանի եւ Սևանի քաղաքապետարանի շնորհիվ: Գագարինում մանկական զբոսայգի ունենալու համար մեծ ջանք ու եռանդ է ներդրել նաեւ համայնքի պատասխանատու Սայաթ-Նովա Բադալյանը, ով իր ելույթում կարեւորեց այն մեծ աշխատանքը, որի շուրջ համախմբվեցին գագարինցիները: Գնահատելով Դավիթ Գալստյանի բարեգործական ձեռնարկը՝ Սեւանի քաղաքապետարանի կողմից նրան շնորհվեց Սեւան քաղաքի պատվավոր քաղաքացի կոչում, իսկ զբոսայգու կառուցապատման եւ բարեկարգման աշխատանքներին ակտիվորեն մասնակցած անձինք արժանացան շնորհակալագրերի: Տոնական օրն ավարտվեց մատաղի արարողությամբ: